

մինը կը կազմեն վարիչն եւ երկու ուսուցիչ, որոնք 300—700 Փլ. կ'ընդունին. այս դպրոցի մէջ՝ բաց ի ծխական դպրոցներու առարկաներէն՝³⁵ որ հայերէն կ'աւանդուին, նաեւ յատուկ ուսուցիչ մը գերմաներէն եւ ռումաներէն լեզուաց դաս կու տայ, եւ նաեւ հայկական եկեղեցական երգեցողութիւն կ'ուսուցուի:

Քահանային ապրուստը — որ արդէն իսկ կատարած պաշտամանց համար՝ թէեւ դին մը սահմանեալ չըլլայ, հարուստ հաւատացեալներէն լաւ վարձ կ'առնու — ինչպէս նաեւ ուսուցչաց, եկեղեցւոյ, դպրոցաց եւ 35—40 աղքատ հայ ընտանեաց ծախքերը կը հոգացուին Սուլափայի հայ եկեղեցւոյն վերաբերեալ Զամբայի եւ Միգդրի³⁶ գրեթէ 470 էփ ընդարձակ կալուածներէն, եւ նաեւ եկեղեցւոյ շէնքերու եկամուտքէն եւ հաւատացելոց նուէրներէն: